ՀՏԴ 725.42

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա.Յու.Սաֆարյան,
Դ.Վ.Թասլակյան

ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դիտարկվում են արտադրական օբյեկտների առևտրայնացման և դրանց տնտեսական արդյունավետությունը խթանող մի շարք մոտեցումներ՝ ներառելով նաև բազմագործառական համակարգերի և արտադրական տուրիզմի կիրառումը: Ներկայացված է Հայաստանի Արագածոտնի մարզի, գ.Սասունիկ արտադրական տուրիզմի զարգացման մի օրինակ գինու գործարանի տարածքում:

Առաջարկվում է ՀՀ մարզերում ստեղծել առավել նշանակելի գինեգործական օբյեկտներին կից բացօթյա թեմատիկ թանգարաններ, ուր տեղ կգտնեն նաև տարածաշրջանի յուրօրինակ կենցաղային ավանդույթներն ու ազգային տարազները:

Առանցքային բառեր. *արտադրական գինեգործական օբյեկտ, բազմագործառական համակարգ, առևտրայնացում, տուրիզմ, բացօթյա թանգարաններ, ազգային ավանդույթներ*

Արդյունաբերական ձեռնարկություններում տնտեսական արդյունավետության հասնելու ուղիներից մեկն այդ օբյեկտների ազդեցության ոլորտի ընդլայնումն է բնակավայրերի քաղաքաշինական համակարգերում (ձեռնարկությունների սոցիալական դերի բարձրացում), ինչը կարող է իրագործվել առկա արտադրական համակարգերում առևտրային գործառական կառուցվածքների ինտեգրմամբ և արտադրական տուրիզմի լայն կիրառմամբ:

Զարգացման ներկայիս փուլում, որը բնութագրվում է գլոբալացման գործընթացներով մարդու գործունեության բոլոր ոլորտներում, անհետացման սպառնալիքի տակ են նաև ազգային մշակութային ժառանգության օբյեկտները: Դրանց լավագույն պահպանության ձևը բացօթյա թանգարաններն են: Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովում առաջարկվեց ըմբռնմամբ մոտենալ հասարակության՝ ավանդական արհեստագործությունն իրենց մշակութային ժառանգության մաս ճանաչելու հարցին [1]:

Համալիր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, ելնելով ներկա շուկայական հարաբերությունների յուրահատկությունից, Հայաստանի Հանրապետության խոշոր և միջին միագործառական արտադրական կառուցվածքները կարելի է վերափոխել բազմագործառական արտադրահասարակական համակարգերի, ուր կներառվեն նաև ավելի մեծ ժամանակահատվածում (8 ժամից ավելի) ձեռնարկությունների տարածքի առավել նպատակահարմար գործունեություն ապահովող որոշ այլ գործառություններ և, վերջապես, նման տարրերի ու միջոցների օգտագործումը մեծ դեր կարող է ունենալ արտադրական

միջավայրի հումանիզացման հարցում՝ անուղղակիորեն նպաստելով արտադրողականության բարձրացմանը [2-6]:

Արդյունաբերական ձեռնարկությունների բազմագործառությունն ու սոցիալական ակտիվությունը կնպաստեն նաև սոցիալ-տնտեսական բարելավմանը, տվյալ արտադրության ճանաչելիությանն ու մարկետինգային առաջխաղացմանը:

Գործարանների գործառական-հատակագծային կազմակերպման փոփոխությունը կարտահայտվի հետևյալ կառուցվածքների (օբյեկտներ և այլն) կազմավորմամբ և զարգացմամբ.

- ռեկրեացիոն, հանգստի և կանաչ գոտիների զարգացում,
- առևտրային և սպասարկման տարածքների (տոնավաճառների համար հարթակներ) և օբյեկտների (խանութներ, ռեստորաններ, սրճարաններ և այլն) ստեղծում,
- մշակութալուսավորական օբյեկտների (թանգարաններ, տարբեր նշանակության դահլիճներ և այլն) հիմնադրում,
- տուրիստական ուղիների, ճանապարհների անցկացում, օժանդակ սենյակների, հյուրանոցների և այլ տարրերի տեղադրում:

Ռեկրեացիոն, հանգստի և կանաչ գոտիներ նպատակահարմար է ստեղծել արտադրական օբյեկտների ներքին կամ շրջակա տարածքներում: Գործարանին կից ռեկրեացիոն գոտիները կարելի է ներդաշնակորեն միացնել քաղաքաշինական այլ նմանատիպ նշանակությամբ գոտիների՝ կազմելով ընդհանուր համակարգ: Ռեկրեացիոն և հանգստի գոտիների հիմնական տարրերն են կանաչ հատվածները, ճանապարհները, փոքր ճարտարապետական ձևերը, ջրավազանները, շատրվանները, հանգստի համար նախատեսված հարթակները, բարդ ռելիեֆի դեպքում՝ դեպի կիրճերն իջնող դարավանդներն ու արհեստական ջրվեժները:

Առևտրային կառուցվածքների ներմուծումն արդյունաբերական միջավայր բացատրվում է արտադրության և դրա արդյունքի՝ արտադրանքի վաճառահանման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծման, դրանց միջև խզումը նվազեցնելու և օրգանական կապի ապահովման, ինչպես նաև գնորդին հնարավորինս արտադրանքի արտադրության բնական պայմաններին մոտեցնելու միտումներով:

Առևտրային կառուցվածքներն արդյունաբերական ձեռնարկություններում կարող են կազմավորվել՝ համատեղելով բաց տարածությունները (տոնավաճառների և հանդիսասրահների համար հարթակներ և այլն) [7] և փակ կառուցվածքները (ֆիրմային խանութներ, բար-ռեստորաններ, սրճարաններ և այլն) [5]:

Մշակութալուսավորական օբյեկտների (մշակութային՝ թանգարաններ, լուսավորական՝ լսարան-լաբորատորիաներ, հանդիսատեսային՝ գիտաժողովների և այլ միջոցառումների համար դահլիճներ) ստեղծումն ու զարգացումն արդյունաբերական ձեռնարկություններում մեծ նշանակություն ունեն նաև դրանց ճանաչողական դերի բարձրացման, կրթության և արտադրության սերտացման հարցերում:

Առևտրային և մշակութալուսավորական կառուցվածքների ներառումը ձեռնարկության մեջ առևտրայնացման առումով կարևոր համակարգի՝ արտադրական տուրիզմի ստեղծման նախադրյալն է: Արտասահմանյան երկրներում որոշ արդյունաբերական ձեռնարկություններում գործող այս համակարգի գործունեության հարուստ փորձը ցույց է տալիս, որ ֆիրմաները բարձրացնում են իրենց հեղինակությունը՝ խրախուսելով լայն հասարակությանն այցելել ձեռնարկություններ, քանզի դա նպաստում է արտադրանքի իրացմանն ու այլ հարցերի լուծմանը [1-3, 6,7]: Առկա ձեռնարկությունների ճարտարապետական լուծումներում որոշ միջամտությունների շնորհիվ կարելի է դրանք համահունչ դարձնել արտադրական տուրիզմին:

Արտադրական տուրիզմի համակարգում անհրաժեշտ տարրերն են.

1. Տուրիստական ուղիները, ուր նշագրվում են առավել դիտարժան և հարմար տեղերը: Յուրաքանչյուր ձեռնարկության համար նպատակահարմար է մշակել բովանդակությամբ և տևողությամբ տարբեր մի քանի տուրիստական ուղիներ, ուր բացի արտադրական մասնաշենքերից կլինեն նաև թանգարաններ, ֆիրմային խանութներ և այլն: Դրանք բաղկացած կլինեն արտաքին և ներքին յուրօրինակ ճարտարապետությամբ դահլիճներից: Ցանկալի է, որ հաճախորդները կարողանան շրջայցի ժամանակ օգտվել գործարանի սպասարկման սենյակներից, սրճարաններից, ճաշարաններից և հատուկ վայրերից, ուր անձամբ կմասնակցեն արտադրական որևէ գործընթացի:

2. Դիտահրապարակներ (այս նպատակով առաջարկվում է օգտագործել նաև շենքերի տանիքները) և այլն:

3. Հյուրանոցներ, որոնք կարող են սպասարկել ոչ միայն հատուկ նպատակով ժամանած հաճախորդների, այլ ավելի լայն շրջանակի:

4. Ազգային արհեստների փոքր արտադրամասեր, որտեղ տվյալ արտադրատեսակի թողարկումն իրականացվում է ժողովրդական ավանդական եղանակով, ինչը բնորոշ էր պատմական հնձանների, դարբնոցների և այլնի համար:

Արդյունաբերական ձեռնարկությունների վարչական, կենցաղային և այլ հասարակական գործառույթների համար նախատեսված շենքերի տեղաբաշխման մեջ առավել սոցիալական, ճարտարապետահորինվածքային և տնտեսական արդյունավետության կարելի է հասնել աշխատող անձնակազմ–հաճախորդ-արտադրություն կառավարման համակարգային մոտեցմամբ:

Ձեռնարկությունների անձնակազմի և ձեռնարկության որոշակի հատվածներ մուտք գործող այլ մարդկանց խմբերի համակարգերի ձևավորումը, սպասարկման օբյեկտների հավաքակազմը և դիրքորոշումը հիմնականում պայմանավորված են բնակավայրերի նկատմամբ ձեռնարկությունների տեղաբաշխմամբ, դրանց տարածահատակագծային բնութագրով և այլն:

Գինեգործարաններն իրենց բնույթով պատկանում են քաղաքային և գյուղական (գյուղատնտեսական) ձեռնարկությունների տիպերին և տեղաբաշխված են ինչպես խոշոր

քաղաքներում, այնպես էլ գյուղերում (դրանց հատակագծային գոտիներում՝ միկրոշրջան, փոքր և միջին քաղաքների և գյուղերի հատակագծային գոտիներ): Քաղաքների դեպքում իրականացվում է առավել սերտ կապ օբյեկտի անձնակազմի սոցիալական ծառայությունների և բնակավայրերի համաքաղաքային հասարակական համակարգերի միջև: Նույնը կարելի է ասել գյուղական վայրերի վերաբերյալ, որտեղ արտադրական օբյեկտները նպաստում են իրենց անձնակազմի սոցիալական ծառայության օբյեկտների սերտաճմանը բնակչության սպասարկման նմանատիպ օբյեկտների հետ՝ կազմավորելով ընդհանուր առևտրա-հասարակական կենտրոններ:

Արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք իրենց բնույթով ոչ մեծ չափի կառուցվածքներ են, կարող են ունենալ ընդհանուր սպասարկման կառուցվածքներ անձնակազմի սպասարկման, այլ նպատակներով գործարան այցելող բնակավայրի բնակչության և այլոց համար: Քաղաքացիական գործառույթների ներառմանն ու ինտեգրված սոցիալական կառուցվածքի ստեղծմանը կնպաստի բնակավայրերի տարբեր հատվածներում սոցիալական ակտիվության կենտրոնների ձևավորումը:

Բաց երկնքի տակ թանգարանների առանձնահատկությունն այն է, որ ցուցադրանքի հիմնական տարածքը շենքերի պատերից դուրս է: Այս կերպ են բնորոշվում թանգարան արգելոցները, որոնց օրենսդրական կարգավիճակ է առանձնաշնորհված: Արդյունաբերական օբյեկտները կարելի է համարել բացօթյա թանգարանների տարատեսակ:

Արտերկրյա փորձը ցույց է տալիս, որ XX դարի երկրորդ կեսից ստեղծվում են գործող (աշխատանքային վիճակով) տեխնիկական, գիտության և տեխնիկայի, ինչպես նաև ստորգետնյա թանգարաններ, ուր վերարտադրվում է ձկնորսական ավանի կյանքը՝ ծովի խշշոցով ու ձկան հոտով (Գերմանիա), ստորգետնյա գինու մառաններ՝ գինիների ցուցադրմամբ և դրանց համտեսմամբ (Ավստրիա) [7]:

Այսօրվա սրընթաց փոփոխվող աշխարհում պատմամշակութային ժառանգության պահպանումը պետք է ուղեկցվի զբոսաշրջության զարգացմամբ՝ տարածաշրջանում տնտեսական ներուժի մեծացման և շահույթի ապահովման համար:

Հայաստանի արդյունաբերական օբյեկտների շարքում արտադրական տուրիզմը կարելի է առավել զարգացնել գինեգործական ձեռնարկություններում, օրինակ՝ Աշտարակ – Էջմիածին մայրուղուն կից Սասունիկ գյուղի (Արագածոտնի մարզ) գինեգործարանում (ճարտ.՝ Վ.Թասլակյան և ուր.), որը կազմավորվել է նախկինում գյուղատնտեսական համալիրի վերակազմակերպման, վերակառուցման և նոր շենքերով ու շինություններով կառուցապատման ընթացքում: Այստեղ արտադրական տուրիզմի որոշ տարրեր ներառված են եղել գործարանի ճարտարապետահատակագծային կառուցվածքի մշակման և իրականացման մեջ (նկ.1,2): Նպատակահարմար ենք համարում գլխավոր հատակագծում (նկ.1) զարգացնել հինգերորդ գոտին՝ բաց երկնքի տակ ընդարձակ թանգարանի կարգավիճակով: Այստեղ կցուցադրվեն նաև մարզի կենցաղային ավանդույթներն ու ազգագրական տարազները:

Առաջարկում ենք ՀՀ ողջ տարածքում, հաշվի առնելով յուրաքանչյուր մարզում արտադրող կոնյակի, օղու, գինու և այլ գինեգործական արտադրանքի յուրօրինակ որակական հատկանիշները, ստեղծել նաև գինեգործական ձեռնարկությունները ներառող արտադրական տուրիզմի ցանց՝ կից ստեղծելով թեմատիկ՝ տուրիստական երթուղիները սպասարկող գործուն թանգարաններ բաց երկնքի տակ՝ նպատակաուղղված ձեռնարկությունների առավել եկամտաբերությանը [7]:



Նկ. 1. Գինու գործարանի գլխավոր հատակագիծ՝ տուրիստական երթուղու սխեմայով, Արագածոտնի մարզ, գ.Մասունիկ



Նկ. 2. Սասունիկի գինու գործարան.
ա- մուտք, բ-բացօթյա սրահ-թանգարան, գ-արտադրական շենքի ինտերիեր, դ-դիտահրապարակ

А.Ю.Сафарян,
Д.В.Таслакян

ЗАДАЧИ КОММЕРЦИАЛИЗАЦИИ ВИНОДЕЛЬЧЕСКИХ ПРОИЗВОДСТВЕННЫХ ОБЪЕКТОВ В МАРЗАХ РА

Рассмотрен ряд подходов коммерциализации и повышения экономической эффективности производственных объектов, включая применение многофункциональных систем и производственного туризма. Представлен пример развития производственного туризма на одном из заводов виноделия в Армении (марз Арагацотн, с. Сасуник).

Предлагается в марзах РА при наиболее значимых винодельческих объектах создать тематические музеи под открытым небом, где также будут представлены традиции, своеобразие быта и национальных обрядов региона.

Ключевые слова: *производственный объект виноделия, многофункциональная система, коммерциализация, туризм, музей под открытым небом, национальные традициии*

A.Yu.Safaryan,
D.V.Taslakyan

COMMERCIALIZATION PROBLEMS OF WINE-MAKING PRODUCTION FACILITIES IN THE MARZES OF RA

A number of approaches to commercialization and improving the economic efficiency of production facilities are considered, including the use of multifunctional systems and industrial tourism. An example of

the development of industrial tourism at one of the wineries in Armenia (marz Aragatsotn, village Sasunik) is given. It is proposed to create open-air museums nearby wineries in Armenia's marzes, where the traditions, originality of life and national rituals of the region will be presented as well.
Keywords: *wine-making production facilities, multifunctional system, commercialization, industrial tourism, open- area museums, traditions, national rituals*

Գրականություն

1. Международная конвенция об охране нематериального культурного наследия, - Режим доступа: http://www.culture29.ru/upload/medialibrary/8f6/8f63al55b0080f66ddf06f260c9cd94b.pdf, свободный.
2. **Аскаров Ш. Д.** и др. Архитектура запада. 4. Модернизм и постмодернизм: критика концепций. – М.: Стройиздат, 1987. – 181 с.
3. **Докашенко Л. В., Полянина С. С.** Промышленный туризм как эффективный инструмент развития экономики региона // Формирование рыночного хозяйства: теория и практика: Сб. науч. ст., вып. 14. – Оренбург: ООО ИПК «Университет», 2013. – 222 с.
4. **Թասլակյան Դ.** Հայաստանի գինեգործական գործարանների ճարտարապետական առանձնահատկությունները: Ճարտ.թեկն. ... ատենախոս. սեղմագիր. – Եր., 1996. - 34 էջ.
5. Строительство и архитектура. - Вып. 5: Архитектура промышленных предприятий / **Г. Н. Черкасов.** – М.: Знание, 1986. - 54 с.
6. **Шатуйро Л. Ф.** Виноградарство и виноделие в США.- М.: Пищевая промышленность, 1976.- 176 с.
7. **Сафарян А.Ю., Сафарян Ю.А., Варданян А.С.** Научно-методологические разработки по проблемам создания этнографических музеев-парков // Науч. тр. НУАСА. - 2016. - Т.IV (63). - С. 122-126.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

Սաֆարյան Աշոտ Յուրիի, ճ.թ. *(ՀՀ, ք.Երևան) – ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, ասիստենտ, (+374) 77700904,* ***Թասլակյան Դավիթ Վրեժի, ճարտ. թեկն.*** *(ՀՀ, ք.Երևան)- ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, ավագ գիտ.աշխ., (+374)91219023, dtaslakian@yahoo.com*

Сафарян Ашот Юрьевич, канд.архит. *(РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, н.с., кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, ассистент, (+374) 77700904,* ***Таслакян Давид Врежович, канд. архит.*** *(РА, г.Ереван)- НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, ст. научн. сотр., (+374) 91219023, dtaslakian@yahoo.com*

Safaryan Ashot Yuri, doctor of philosophy (Ph.D.) in Architecture *(RA, Yerevan) – NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, researcher, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical-Architectural Heritage, Fine Arts and History, assistant, (+374) 77700904,* ***Taslakyan David Vrezh, Doctor of Philosophy in Architecture*** *(RA, Yerevan)- NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, senior researcher, (+374) 91219023, dtaslakian@yahoo.com*

Ներկայացվել է՝ 13.03.2017թ.
Ընդունվել է տպագրության՝ 30.03.2017թ.